Արձանագրություն N 2

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36>> ծածկագրով Դիլիջան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	14.11.2019թ. ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ս. Մաթևոսյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Լ. Պայլան
	Ն. Մարտիրոսյան
	Ն. Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝	Ա. Հակոբյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ս. Մաթևոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 08.11.2019թ., ժամը 11:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 17 380 000 (տասնյոթ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ	ք. Երևան Բաղրամյան 1 ՓԿՂ 14$_2$. 12 բն.	25 000 000	-	25 000 000

դ) Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է 08.11.2019թ. նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ե) Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 12.11.2019թ. նիստի ընթացքում պարզվել է, որ մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման առարկայի նախահաշվային արժեքը: Վերջինս հաշվի առնելով՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել մասնակցին առաջարկված գնի նվազեցման նպատակով (14.11.2019թ. ժամը 11:30-ին ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ հասցեում) կայանալիք բանակցությունների մասին:

Մասնկացի կողմից ներկայացված նոր գնային առաջարկը կազմել է 17 360 000 (տասնյոթ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի մասին

(Ս.Մաթևոսյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է հետևյալ կերպ

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղն զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ս.Մաթևոսյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշում է.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը,

բ) ծանուցել 1-ին տեղն զբաղեցրած մասնակցին՝ <<ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/36 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս.Մաթևոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ս. Մաթևոսյան

Անդամներ՝ ---------- Լ. Պայլան

---------- Ն. Մարտիրոսյան

---------- Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան